ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 հունվարի 2020 թվականի N24Ա

« ԱՆՊԱՐՏ ՀԱՅ ԶԻՆՎՈՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Անպարտ հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 576.000 (հինգ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել «Անպարտ հայ զինվոր» խորագրով մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, աշխատակարգը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5-րդ հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

24.01.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано POGHOSYAN HUNAN 4005640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020թ. հունվարի 23
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2020թ հունվարի 23-ի
N 24 -Ա որոշման

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման

1.	Ն.Բաբայան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
2.	Գ.Թադևոսյան	ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական
3.	Ն.Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ
4.	Մ.Գանդալյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
5.	Ս.Ավետիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
6.	Ա.Սիմոնյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետի ժ/պ
7.	Թ.Կարապետյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
8.	Վ. Արզումանյան	«Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

1/23/2020

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Signed by MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2020թ.հունվարի 23 -ի
N 24 - Ա որոշման

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման

Միջոցառման նպատակն է՝ ներկայացնել Հայաստանի Հանրապետության անկախ պետականության կայացած ու անպարտ բանակի ակունքները, 28-ամյա ընթացքը, հզոր ու կայացած կառույցի անխախտելի լինելը, հայրենիքի համար իր կյանքը նվիրաբերող հայ զինվորի անկոտրում կամքի վառ դրսևորման գաղափարը:

Միջոցառման թիրախ խումբ է հանդիսանում մարզի երիտասարդությունը: Միջոցառումը խթան կհանդիսանա երիտասարդության շրջանում ազգային ոգու բարձրացման, հայրենասիրական դաստիարակության ամրապնդման, հայրենիքի նկատմամբ հավատի ու վստահության դրսևորման:

1. Բանակի տոնի կապակցությամբ Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում կկատարվի հոգեհանգստի և խնկարկման արարողակարգ, Սուրբ պատարագ և մոմավառություն:
2. Հայոց բանակի 28-ամյակի կապակցությամբ ինտելեկտուալ խաղի կազմակերպում՝ երիտասարդության և զինվորների մասնակցությամբ:
3. ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամասի զինվորների գիտաճանաչողական այցի կազմակերպում Կապանի երկրագիտական և Շ.Մովսիսյանի անվան պատմության թանգարաններ:
4. Միտինգ, շքերթ, սպառազինության և ռազմական տեխնիկայի ցուցադրություն՝ N զորամասի մասնակցությամբ:
5. Կինոֆիլմի դիտում (ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամասի զինվորների այց Կապանի «S'Unique Movie Theatre» կինոթատրոն):
6. Այցելություն Կապանի Բաղաբուրջ հուշահամալիր, ծաղկադրում և հարգանքի տուրք Արցախյան ազատամարտում և ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների շիրիմներին:

1/23/2020

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Signed by: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի

գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2020թ. հունվարի 23-ի
N 24 -Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման

Միջոցառման նպատակը.

Միջոցառման նպատակն է ներկայացնել Հայաստանի Հանրապետության անկախ պետականության կայացած ու անպարտ բանակի ակունքները, 28-ամյա ընթացքը, հզոր ու կայացած կառույցի անխախտելի լինելը, հայրենիքի համար իր կյանքը նվիրաբերող հայ երիտասարդի՝ 18-ամյա զինվորի անկոտրում կամքի վառ դրսևորման գաղափարը: Միջոցառման թիրախ խումբ է հանդիսանում մարզի երիտասարդությունը: Այն երիտասարդության շրջանում խթան կհանդիսանա ազգային ոգու բարձրացման, հայրենասիրական դաստիարակության ամրապնդման, հայրենիքի նկատմամբ հավատի ու վստահության դրսևորմանը:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը.

«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Միջոցառման մասնակիցները.

«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառմանը մասնակցում են Սյունիքի մարզի երիտասարդությունը, արվեստի բնագավառի շնորհալի ստեղծագործողներ, անհատ կատարողներ, մարզում տեղակայված N զորամասի զինվորներ:

Միջոցառման ժամկետը և վայրը.

Միջոցառումներն անց են կացվելու 2020թ. հունվար, փետրվար ամիսներին, մարզում տեղակայված N զորամասերում, Կապան քաղաքում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը.

Միջոցառումները կազմակերպվում են ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը և անցկացման վայրը: Միջոցառումների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմակերպական կոմիտեի հետ:

Միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը հոգում է «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

1/23/2020

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Signed by: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2020թ. հունվարի 23 -ի
N 24 -Ա որոշման

«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման

	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար ՀՀ դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	**40.0**
2	Սարքերի և սարքավորումների վարձակալություն	4216	**23.0**
3	Հանրային սննդի ծառայություններ	4236	**35.0**
4	Նվերներ	4237	**280.0**
5	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	**90.0**
6	Այլ մասնագիտական ծառայություններ	424	**69.0**
7	Գրասենյակային ապրանքներ և նյութեր		**39.0**
	Ընդամենը		**576.0**

1/23/2020

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Signed by: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2020թ. հունվարի 23 -ի
N 24 -Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«Անպարտ հայ զինվոր» խորագրով միջոցառման

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման վայրը
1	ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամասի զինծառայողների համար կինոֆիլմի ցուցադրում/	27 հունվար 2020թ Ժ.11^{00}- 13^{00}	«S'Unique Movie Theatre» կինոթատրոն ք.Կապան Շահումյան 1 4-րդ հարկ
2	Զինվորների այցելություն Կապանի երկրագիտական և Շ.Մովսիսյանի անվան պատմության թանգարաններ	27 հունվար 2020թ Ժ.11^{30}- 12^{30}	ք.Կապան Կապանի երկրագիտական թանգարան Շ.Մովսիսյանի անվան պատմության թանգարան
3	Միտինգ, շքերթ Կապանում տեղակայված N զորամասի մասնակցությամբ	28 հունվար 2020թ Ժ.10^{00}- 11^{00}	Կապանի Գ.Նժդեհի անվան հրապարակ
4	Երթ՝ զոհված հերոսների պանթեոն, ծաղկադրում և հարգանքի տուրք Արցախյան ազատամարտում և ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների շիրիմներին	28 հունվար 2020թ Ժ.11^{00}- 12^{00}	ք.Կապան Բաղաբուրջի հուշահամալիր
5	Սպառազինության և ռազմական տեխնիկայի ցուցադրություն N զորամասի մասնակցությամբ	28 հունվար 2020թ Ժ.12^{00}- 12^{30}	Կապանի մշակույթի կենտրոն ՀՈԱԿ-ի հարակից տարածք
6	Ինտելեկտուալ խաղ նվիրված Հայոց բանակի 28 ամյակին /երիտասարդների և զինվորների մասնակցությամբ/ Երաժշտական կատարումներ	09 փետրվար 2020թ Ժ.11^{00}- 13^{30}	Կապանում տեղակայված N զորամաս

1/23/2020

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Signed by: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան